«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

ԱՌԱՐԿԱ՝ Պատմություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Լյուդմիլա Զաքարյան

ՄԱՐԶ՝ Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Երնջատափի Ե. Չարենցի անվան միջն.դպրոց

Բովանդակություն

1.Ներածություն……2
2.Կրտսեր դպրոցականի կրթության կազմակերպումը և ընտանեկան դաստիարակությունը……..…4
3. Դեռահասների կրթության կազմակերպումը և ընտանեկան դաստիարակությունը……....……6
4.Պատանիների կրթության կազմակերպումը և ընտանեկան դաստիարակությունը…….....8
5. ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպումը և ընտանեկան 9
.Գրականության ցանկ……...16

Ներածություն

Մանուկներին կրթելը աշխարհիս երեսին ամեն բան է ինձ համար…

Ուսուցիչը պետք է աշակերտին սիրի այնպես,ինչպես հայրը որդուն:

Խ. Աբովյան

Հայ ժողովրդի համար ընտանիքը սրբություն է. ավանդույթների, սովորույթների, մշակույթի,դաստիարակության և բազմաթիվ այլ հատկանիշների կրողն ու փոխանցողը: Այն երեխայի կյանքում հասարակական առաջին աստիճանն է և մեծ տեղ ու դեր է զբաղեցնում նրա դաստիարակության կայացման հարցում: Ընտանեկան դաստիարակությունը շարունակական է,որի դերի բարձրացումը ավելի շատ է կախված դպրոցից:Ընտանիքի և դպրոցի համագործակցության

կետրոնում երեխան է,ով իր կրթության և զարգացման գլխավոր դերակատարն է և դպրոցում և ընտանիքում:
Եթե ընտանիքն ու դպրոցը համագործակցեն,ապա հաղթանակն ապահովված կլինի:Ամենակարևորը հետևել հզոր այգեպանի վարքագծին,որն ընդհամենը հոգ է տանում ի բույսի մասին,իսկ մնացածը բույսն ինքն է անում:

Արդի ժամանակներում,սակայն փոխվել է մարդկանց աշխարհայացքը,մտածելակերպն ու կյանքի պայմանները:Տնտեսության ,գիտության և մշակույթի արագ զարգացումը հատկապես ավելի բարձր պահանջներ են առաջադրում կրթական համակարգին:
21-րդ դարը նոր մարտհրավերներ է նետում մարդկությանը՝ նպաստելով գիտատեխնիկական առաջընթացին: Տեղեկատվական հեղափոխությունը վերափոխում է արդի հասարակությունը,որոշակի փոփոխություն է կրում ընտանեկան դաստիարակությունը:Սոցիալ-տնտեսական և հոգևոր մշակութային կյանքի հորձանուտում աղճատվում է ավանդական ընտանիքի նկարագիրը՝արդիական դարձնելով ընտանեկան դաստիարակության,դպրոցի,ընտանիքի և,ընդհանրապես,համայնքի համագործակցության հիմնախնդիրները:
Ուշագրավ է մեծն մանկավարժ Մակարենկոյի հետևյալ խոսքերը.<<Մեր երեխաները մեր ծերությունն են:Ճիշտ դաստիարակենք, մեր երջանիկ ծերությունն է,վատ դաստիարակությունը՝մեր ապագա վիշտը,մեր արտասուքները,դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև>>:

Երեխաներին,ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտավախություններ և խնդիրներ,որոնք առնչվում են ուսուցման և դաստիարակության հարցերին: Այս մասին առավել մանրամասն կշարադրեմ բուն նյութի շրջանակներում՝ըստ սովորողների տարիքային զարգացման առանձնահատկությունների,ներառյալ ԿԱՊԿՈՒ երեխաների:
Ի հավելումն վերոնշյալի,նշեմ,որ մեծ մանկավարժները և հոգբանները՝ ելնելով սովորողների ուսուցման և դաստիարակության զարգացման առանձնահատկություններից,դպրոցական տարիքը պարբերացրել են երեք հետևյալ փուլերով՝
1.Կրտսեր դպրոցական՝1-4 դասարաններ
2.Դեռահաս(միջին տարիք)5-9դասարաններ
3.Ավագ դպրոցական(պատանեկություն)10-12դասարաններ

6-9 տարեկան	Կրտսեր դպրոցական 1-4 դասարաններ

10-14,15տարեկան	Դեռահասություն 5-9դասարաններ
16-18տարեկան	Պատանեկություն 10-12դասարաններ

Գլուխ 1

Կրտսեր դպրոցականի կրթության կազմակերպումը և ընտանեկան դաստիարակությունը

Գալով դպրոց երեխան միանգամայն նոր սոցիալական իրավիճակի մեջ է հայտնվում:Փոխվում է նրա դերը հասարակության մեջ:Նրա առջև կանգնեցվում են նոր պարտականություններ,նա ստանում է նոր իրավունքներ:Փոխվում է երեխայի կենցաղը և ռեժիմը,նրան ձգում է խաղը,բակը,ընկերները:Նախկին սովորույթները և նոր դպրոցի կողմից դրված պահանջները իրար չեն համապատասխանում:

Դպրոց ընդունվելուն պես երեխան հայտնվում է միևնույն լուրջ գործով զբաղվող հասակակիցների խմբում:Նոր պայմաններին,ընկերներին հարմարվելու գործում շատ մեծ է ուսուցչի դերը:Նախ և առաջ մի որոշակի ժամանակաշրջան երեխային պետք է պատրաստել նոր գործունեության,քանի որ ուսումնական գործընթացը զուտ սոցիալական երևույթ է և երեխան չի պատկերացնում,թե ինչպես լուծի իր առջև դրված խնդիրները:Ուսուցիչը և ծնողը պետք է երեխային բացատրեն նոր պահանջները:

Դպրոցին երեխայի բազմակողմանի հարմարումը ապահովելու համար անհրաժեշտ է բազմակողմանի աշխատանք: Եթե ուսուցիչը որոշակի անհատական մոտեցում չցուցաբերի և փորձի երեխային պատժել,ապա դա կունենա կործանարար ազդեցություն նրա ողջ կյանքի ընթացքում:Չնայած երեխաների նկատմամբ ունեցած ուսուցչի բարի վերաբրմունքին,այդուհանդերձ,նա հանդես է գալիս որպես հեղինակավոր և խիստ դաստիարակ:
Ուսուցչի և ծնողի համատեղ և տեղին գործունեության արդյունքում կրտսեր դպրոցականը արագ կկարողանա հարմարվել նոր միջավայրին:Երեխային արդեն սկսում են հետաքրքրել միանգամայն այլ բնույթի ինֆորմացիա,փոխվում է երեխայի արժեքային համակարգը:Վերջինս սկսում է բարձր գնահատել նոր գործունեության ձևերը,դրանց արդյունքները:Երեխան բարձր է գնահատում ուսումը:Լավ սովորելը դառնում է արժեք,դրա համար էլ նա գնահատում է իրեն և մարդկանց,ձեռք է բերում նոր մտածելակերպ:Նա արագորեն սկսում է զարգացնել մտածելակերպը:

Ցանկալի արդյունքի հասնելու համար մեծ աշխատանք պետք է տանել կրտսեր դպրոցականների հետ ուսումնական գործունեության յուրացման կապակցությամբ:Կարևոր է աշակերտին սովորեցնել,թե ինչպես սովորել նյութը:Աշակերտին պետք է հասկանալի դարձնել առաջադրված խնդիրը,հասկանալի դարձնել այն քայլերը,որոնց միջոցով նա պետք է հասնի խնդրի լուծմանը:
Կրտսեր դպրոցականը պետք է սովորի ինքնահսկաման հնարները,այսինքն գնահատել խնդրի լուծման արդյունքները: Ուսուցման գործընթացի անբավարար ընթացքը խանգարում է երեխային ոչ միայն յուրացնել գիտելիքը,այլև մեծ վնաս է հասցնում դպրոցականի կյանքին:Այս ամենի հետևանքը հանգեցնում է 7 տարեկանի ճգնաժամին: 7 տարկանի ճգնաժամը գիտնականները կապում են ուսումնական խնդիրների հետ:Այս տարիքում երեխաները դառնում են նյարդային,կամակոր,արագ հոգնում են և չեն ուզում հաճախել դպրոց:Այս պարագայում ուսուցիչը պետք է ոտքի հանի իր ողջ մանկավարժական զինանոցը՝երեխային ճգնաժամային իրավիճակից դուրս բերելու համար:Այս տարիքում աշակերտի համար կարևոր է ուսուցչի գովասանքը,գնահատականը,ավելի ուշ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ:Այս ամենը նպաստում է երեխայի կողմից սոցիալական իր նոր դերի գիտակցմանը:Այս պարագայում մեծ է թե՛ ուսուցչի, և թե՛ ընտանիքի դերը:Հետզհետե մեծանում է նաև հասակակիցների հետ շփումները,որի բավարարման ընթացքում երեխան սկսում է հասկանալ առկա կանոնները,միջանձնային շփման նրբությունները:
Ուսման գործունեությունը փոխում երեխայի զգացմունքների բովանդակությունը, դրանք դառնում են ավելի գիտակցված և զսպված:Այս գործընթացում կարևորվում է ծնողի կամ օրինական ներկայացուցչի դերը,որը կարող է ներկայացնել երեխային ընդունելի վարքագծեր ,նորմեր,կանոններ և զարգացնել երեխայի բարոյական ինքնագիտակցությունը:



ԳԼՈՒԽ 2

Դեռահասների կրթության կազմակերպումը և ընտանեկան դաստիարակությունը

Տարիքային այս փուլը բնութագրվում է հզոր տեղաշարժերով՝սեռային պարբերացման գործընթացներով:Տեղի է ունենում երեխաների արագ հասունացում:Ֆիզիկական հասունացումը տղաների և աղջիկների մոտ տարբեր հակասություններ է առաջացնում:Եթե տղաների մոտ արագ հասունացումը սովորաբար բարձրացնում է սոցիալական ստատուսը,ապա աղջիկների մոտ կարող է հասակակիցներից օտարման պատճառ հանդիսանալ և ընթանալ խիստ հուզականորեն:Այս ամենի արդյունքում նրանք համարյա լիովին հասուն մարդ են դառնում,սակայն սոցիալական տեսանկյունից և սոցիալական դիրքերի առումով մնում են երեխա:Այդ է պատճառը,որ դեռահասությունը հաճախ շատերի մոտ ընթանում է ճգնաժամերով:Ըստ ռուս գիտնական Վիգոտսկու՝ դեռահասության ճգնաժամը պայմանավորված է օրգանական,սոցիալական և հոգեբանության զարգացման անհամամասնություններով:Այս տարիքի երեխաները կարծում են,որ իրենք պատրաստ են հասուն կյանքի և չեն կարող գտնվել ծնողների տրամադրության տակ:Նրանց մեջ ձևավորվում է ագրեսիա ծնողի,ուսուցչի և հասարակության նկատմամբ:

Դեռահասության տարիքի ամենակարևոր բնութագրերից մեկը ինքնուրույնության ձգտումն է,որը շատ բան է որոշում միջանձնային հարաբերությունների ժամանակ,հատկապես ծնողների հետ հարաբերությունների ժամանակ:Երեխան ձգտում է ինքնուրույն որոշում կայացնել,սակայն հաճախ ծնողները չեն տեսնում երեխաների մեջ տեղի ունեցող հզեր տեղաշարժերը:Ծնողները երեխաների հետ այնպես են վերաբերվում,ինչպես փոքրերի:Սա հաճախ հանգեցնում է կոնֆլիկտների: Երեխաները կարծում են ,թե ծնողները իրենց ճիշտ չեն հասկանում,իսկ դա իսկպես ճիշտ է :Սակայն

դեռահասության ճգնաժամը անցումային շրջան է,և էապես կարող է մեղմվել դաստիարակչական ճիշտ մոտեցումների դեպքում և ընդհակառակը:Եթե չի փոխվում ծնողների կողմից վերաբերմունքը երեխայի նոր ձգտումներին,սպասումներին,հաճախ տեղի է ունենում օտարում սեփական ընտանիքից:Եթե ծնողները վստահում են երեխային,այսինքն նրան թույլ են տալիս իրենց հետ համաձայնեցնելով իրականացնել իրենց որոշումները,ապա այս դեպքում երեխան վստահում է ծնողներին:Երեխայի համար հայրը և մայրը դառնում են համար մեկ մոդել:

Հետազոտությունները ցույց են տվել,որ հասակակիցների կողմից ընդունվելու գործում մեծ դեր է խաղում անհատի սեփական ԵՍ-ի ինքնագնահատականը:Այս դեպքում նա հեշտությամբ է հարմարվում միջավայրին:Գնահատականի ցածր լինելու դեպքում դեռահասը ավելի կաշկանդված է լինում և հաճախ է մեկուսանում միջավայրից:Դեռահասության տարիքին բնորոշ է տեսողական մտածողությունը:Նա ձեռք է բերում նոր աշխարհայացք՝աշխարհի և սեփական ԵՍ-ի,մարդկանց հետ հարաբերությունների և այլնի հանդեպ:Էապես փոխվում է երեխաների հասկացությունների շրջանակը.առօրեականին փոխարինելու է գալիս տեսականը,այսինքն երևույթները սկսում են գնահատել պատճառահետևանքային և տրամաբանական կապերի հիման վրա:Երեխայի մտածողությունը դառնում է համակարգված,հեևողական,տրամաբանական,որն էլ նպաստում է հումորի կտրուկ զարգացմանը:Հիշողությունը իմաստավորված է,էապես զարգանում է կամքը և ինքնահսկումը:

Դեռահասների դաստիարակությունը ունի իր որոշակի դժվարությունները՝կապված ամենից առաջ նրանց ֆիզիոլոգիական առանձնահատկությունների հետ :Թե՛ դպրոցը և թե՛ ընտանիքը պետք է ճիշտ կազմակերպեն երեխայի դաստիարակությունը՝հաշվի առնելով վերջինիս ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները:

Դեռահասի կյանքում դպրոցը և ուսումը մեծ տեղ են զբաղցնում:Այս տարիքում դեռահասների ուսումնաիմացական գործունեությունը դուրս է գալիս դպրոցական ծրագրերի շրջանակներից:Գիտելիքի ձեռքբեռումը,սակայն ոչ բոլոր դեռահասների համար է դառնում ներկայի և ապագայի համար անհարաժեշտ գործողություն:Նրան բնորոշ է հետաքրքրասիրությունը,որը կարող է տարբեր ուղվածություններ ունենալ:

Մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները սովորաբար սկսվում է ավագ դեռահասության տարիքից:Մանկավարժի ցուցաբերած հատուկ դաստիարակչական աշխատանքների շնորհիվ դեռահասի մոտ սկսվում է հետաքրքրություն առանձին մասնագիտությունների նկատմամբ:

Այդ տարիքի աշակերտների հետ տարվող աշխատանքում ուսուցչի կարևորագույն խնդիրն է մանկավարժորեն ճիշտ կազմակերպել նրանց գործունեությունը թե՛ դպրոցում,թե՛ դպրոցից դուրս:Նրանց նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերելիս պահպանել անհրաժեշտ տակտ,դրսևորել մանկավարժական զսպվածություն և համբերություն:

Դեռահասության ճգնաժամեր

ԳԼՈՒԽ 3

Պատանիների կրթության կազմակերպումը և ընտանեկան դաստիարակությունը

Պատանեկության տարիքում լիովին ավարտվում է մարդու ֆիզիկական և հոգեբանական հասունացումը:Նույնը կարելի է ասել հոգեբանական ֆունկցիայի մասին: Այս տարիքում աստիճանաբար գլուխ է բարձրացնում նոր պրոբլեմ՝մարդու կյանքի իմաստի,կյանքում սեփական տեղը գտնելու և նման այլ աշխարհահայացքային հարցեր:Մասնագիտական կողմնորոշումը սկսում է

առաջատար տեղ գրավել պատանու կյանքում:16-18 տարեկան պատանիները սովորում են դպրոցում, որից հետո պիտի պատրաստ լինեն մտնելու կյանք:Այս հանգամանքը հանգեցնում է ճգնաժամի:Ուսումնասիրությունները ցույց են տվել,որ ինքնասպանությունները այս տարիքում մեծ տոկոս են կազմում:Մեծանում է նաև կոնֆլիկտների թիվը միջավայրի հետ՝ուսուցիչներ,ծնողներ և այլն:Տեղի է ունենում սերունդների պայքար.ինձ տվեք ինքնուրույնություն և ընդունեք ինձ իրավահավասար անձնավորություն:Սեփական ԵՍ-ի անկրկնելիության ձգտումը հիմք է հանդիսանում պատանեկության ենթամշակույթի ձևավորման համար:Այս տարիքում շատ կարվոր է դաստիարակության մեջ անհատական մոտեցումը,քանի որ ամեն աշակերտի մեջ շատ վառ է դրսևորվում անհատականությունը:Ընդ որում անհատական մոտեցումը շատ կարևոր է ինչպես անհատական նախադրյալների և ընդունակությունների զարգացման լավագույն պայմաններ ստղծելու,այնպես էլ օգնություն ցույց տալու նրանց,ովքեր դժվարություններ են կրում միասնական ուսումնական ծրագրերի պահանջների կատարման մեջ,կամ շեղումներ են թույլ տալիս վարքի նորմերից,խախտում կարգապահությունը և այլն:
Պատանեկության տարիքի ամենակարևոր նորագոյացություններն են աշխարհայացքի ձևավորման տարրերը,անցումը բարոյական զարգացման նոր ստադիայի.սոցիալական նոր ստատուսի ձեռք բերում,անձնագիր,ընտրական իրավունք և այլն:Այս տարիքում հարաբերությունները դեռահասների հետ ավելի արդիական են դառնում:Ամուսնությունը դառնում է որպես առաջնահերթ նպատակ:
Այնուամենայնիվ, ժողովրդի մեջ ընդունված է այն տեսակետը,որ պատանկությունը կյանքի ամենաերջանիկ շրջանն է:Բացակայում է պատասխանատվությունն իր և ուրիշների հանդեպ,մյուս կողմից նկատելիորեն ընդլայնված է ազատությունների շրջանակը:Այս տարիքում մարդու հիմնական նպատակը ինքնուրույնության հասնելն է:

Դպրոց-աշակերտ-ծնող

ԳԼՈՒԽ 4

ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպումը և ընտանեկան դաստիարակությունը

Հայ ժողովուրդը պատմության մեջ հայտնի է խոցելի խմբերի հանդեպ իր ունեցած մարդասիրական մոտեցումներով:Հնում եկեղեցին իր վրա է վերցրել հաշմանդամներին և կարիքավորներին կրթելու,հոգ տանելու և ներառելու մեծ գործը:Սակայն խորհրդային տարիներին պատկերը փոխվեց.բացվեցին

հատուկ հաստատությունը և մարդիկ առանձնացվեցին հասարակությունից:Ընտանիքները տարիներով թաքցնում էին նման երեխաների գոյությունը՝համարելով այն ամոթալի դժբախտություն:Բարեբախտաբար այժմ պատկերը բավականին այլ է,և զգալի են դրական տեղաշարժերը հասարակության ընկալման և վերաբերմունքի մեջ:

Ի թիվս մի շարք միջազգային կազմակերպությունների,ՀՀ կառավարությունը ևս դրական քայլեր է ձեռնարկում երեխաների կրթության իրավունքն իրականացնելու նպատակով,այս փաստն է վկայում ՀՀ Ազգային Ժողովի 2014թ դեկտեմբերի 1-ին ընդունված <<Հանրակրթության մասին ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքը,որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության:
Ըստ օրենքի ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար,այդ թվում ԿԱՊԿՈՒ, զարգացման առանձնահատկություններին համապատասխան,անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և ՀՊՉ-ով սահմանված արդյունքի ապահովումն է:Համաձայն վերոհիշյալ օրենքի **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք** ունի <<ուսուցման հետ կապված դժվարություններ,այդ թվում՝զարգացման կամ մտավոր առանձնահատկությունը ունեցող այն անձը,սովորողը,որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացվելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ>>:

Ներառական կրթությունը չի վերաբերվում միայն հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությանը,այն պետք է օգտակար լինի բոլոր երեխաներին և կենտրոնացված բոլորի կարիքների վրա՝բոլոր սովորողների համար ապահովվելով որակյալ կրթություն և սոցիալական ներառում:

Ուսուցիչը այսուհետ ԿԱՊԿՈՒ (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) երեխաների համար կազմում է ԱՈՒՊ(անհատական ուսուցման պլան):
Վերը նշվածից ելնելով կարելի է ասել,որ ԾՆՈՂ-ԵՐԵԽԱ-ՈՒՍՈՒՑԻՉ փոխհարաբերությունների խնդիրը միշտ էլ եղել է հոգեբանների հետաքրքրության շրջանակներում: Զարգացման տարբեր խանգարումներ և հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատելիս առանց ծնողների ներգրավվածության,փոխհամագործակցության գրեթե հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքի:

Ցավոք մեր իրականության մեջ գնալով մեծանում է խանգարումներ և հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը, որը մտածելու տեղիք է տալիս:Ինչպես լուծել այս խնդիրը,օգնել ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխաներին:

Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կատարած հետազոտությունների ներառական կրթությունն օգնում է բոլոր երեխաներին՝հաշմանդամություն ունեցող և առանց,նաև նպաստում է ավելի կայուն,հանդուրժող և բարգավաճ հասարակության կայացմանը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել,որ մտավոր խանգարումներ և հաշմանդամություն ունեցող երեխաներին կարելի է դասակարգել ըստ զարգացման առանձնահատկությունների:Նման խանգարումների թվին են դասվում՝

Աուտիզմը՝

1Սոցիալական հաղորդակցման և սոցիալական փոխազդեցության բացակայություն,

2Սահմանափակ և կրկնվող վարքաձևեր,հետաքրքրություններ և գործողություններ:

Ասպերգերի համախտանիշ:

Մանկական ուղեղային պարալիզ:

Հիպերակտիվություն:

Ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխաներ

Ուսման մեջ դժվարություններ

Դիսլեքսիա(կարդալու կարողության խանգարում)

Դիսգրաֆիա(գրելու կարողության խանգարում)

Դիսկալկուլիա(մաթեմատիկական գործողություններ կատարելու կարողության խանգարում)

Լսողական վերլուծության խանգարում

Սոցիալական դժվարություններ

Եզրակացություն

Իմ հետազոտության արդյունքում եկա այն եզրահանգման,որ ծնողների ներգրավվածությունը երեխայի կրթության և դաստիարակության գործում նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում:

Երեխային դպրոցական կյանքին պետք է նախապատրաստել դեռ վաղ տարիքից՝ցուցաբերելով մեծ համբերություն:Չկոտրել վստահությունը հաջող ուսման,աշխատանքի հանդեպ,նաև ճիշտ և բազմակողմանի զարգացման համար թույլ տալ ունենալ սխալվելու իրավունք:Երեխայի վստահությունն իր ուժերի հանդեպ,հավատը,որ ինքը կարող է սովորել,կարևոր պայմաններ են նրա ուսման

համար:Սակայն առանց ընտանիքի և դպրոցի համաձայնեցված աշխատանքի անգամ ամենալավ դպրոցում և ամենափորձված ուսուցչի համար դժվար կլինի կրթության և դաստիարակության գծով արդյունավետ աշխատանք տանել:

Հավելեմ,որ յուրաքանչյուր ծնողի սրբազան պարտքն է այսօր երեխային ճիշտ դաստիարակություն տալը:Ծնողը պետք է հասկանա,որ անհրաժեշտ է ոչ միայն սիրել երեխային և հոգալ նրա ամենօրյա հոգսերը, այլ անհրաժեշտ է,որ երեխան զգա,հասկանա,վստահ լինի,որ իրեն սիրում են,ինչպիսի դժվարություններ,բախումներ և կոնֆլիկտներ էլ որ ծագեն ծնողի հետ իր հարաբերություններում:Միայն սիրո վրա հիմնված կարող է դաստիարակվել բարոյական վարքագիծ:Միայն սերը կարող է սովորեցնել ոչ միայն թերի,այլ նաև լիարժեք ընտանիքի երեխային: Երեխայի նկատմամբ ճիշտ մոտեցումը և նրա խելամիտ դաստիարակությունը հաջող ուսուցման հիմքն են:Մանկավարժի գլխավոր խնդիրն է անձի մեջ արթնացնել հետաքրքրություն դեպի դպրոցը,ուսումը,մշակել համառ ու հաստատակամ, կայուն սովորույթներ,հետաքրքրություն դաստիարակել դպրոցի,դասի,պարապմունքների հանդեպ:Շատ կարևոր է նաև երեխայի դաստիարակության հարցում ծնողի վերաբերմունքը,ինչպես նաև այն հանգամանքը,թե վերջիններս ըստ իրենց իմացական կարողությունների,որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում:

Ծնող-դպրոց համագործակցության մեթոդները տարբեր են՝խմբային և անհատական:Կան հարցեր,որոնք քննարկվում են ընդհանուր ժողովների ժամանակ:Ծնողական ժողովը հիմնական ձևն է ծնողների հետ տարվող աշխատանքի,որի միջոցով լուծվում են դաստիարակչական բնույթի հարցեր,որտեղ շատ կարևոր է դասղեկի և մյուս ուսուցիչների շփման ոճը:Կարևոր է նաև խորհրդատվությունների կազմակերպումը,որոնք կրում են անհատական բնույթ:Լուրջ խնդիրների դեպքում կարևոր է ծնողներին հուզական աջակցություն ցույց տալ:

Մեջբերեմ,որ երեխայի դաստիարակության գործում անգնահատելի տեղ ունի դասղեկը,նրա կատարած աշխատանքը՝ձևավորելով նոր մարդու:Դասղեկը մեծ դեր է կատարում մատաղ սերնդի դաստիարակության բարդ ու պատասխանատու գործում՝դպրոցի,ընտանիքի և հասարակության ջանքերը համատեղելու գործընթացում:Ինչպես նշել է Արիստոտելը.<<Ծնողները երեխային կյանք են տալիս,ուսուցիչ-դաստիարակը՝ բարի կամք>>:

Հետազոտական աշխատանքիս վառ ապացույցն է Աբրահամ Լինքոլնի նամակը որդու ուսուցչին:Վերջինիս կարելի է անվանել ՄԵԾ ՈՒՍՈՒՑԻՉ:Լինքոլնը մտահոգ լինելով որդու դաստիարակության հարցերով նամակ է գրում որդու ուսուցչին.<<…դպրոցում նրա գտնվելու ընթացքում սովորեցրեք արդար պարտվել,այլ ոչ թե խարդախությամբ հաղթել:Սովորեցրեք նրան վստահել իր սեփական մտքերին,եթե նույնիսկ ոմանք պնդում են,որ ինքը սխալվում է… Սովորեցրեք նրան հավատալ ինքն իրեն,որովհետև այդ դեպքում նա միշտ հավատով լցված կլինի մարդկանց հանդեպ…>>:

Գրականության ցանկ

1.Ս.Ս. Խուդոյան <<Անձի զարգացման ճգնաժամային տարիքները>>:

2.Ա.Վ.Պետրովսկի <<Տարիքային և մանկավարժական հոգեբանություն>>:

3.Յու.Բաբանսկի <<Մանկավարժություն>>

4.Նալչաջյան <<Ընդհանուր հոգեբանության հիմունքներ>>

5.Լև Ս.Վիգոտսկի <<Հոգեբանություն>>:

6.Սյուզաննա Պետրոսյան <<Ներառական կրթությունը գործնականում>>:

7.Սիրանուշ Անտոնյան <<Ծնողավարության ձեռնարկ>>:

8.World Vision <<Դաստիարակության դրական մոտեցումներ>>: